ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 8-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 55.1-րդ հոդվածի 4-րդ մասի և «Փրկարար ծառայության մասին» օրենքի 68-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ուսումնական հաստատության պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

1/21/2025

X

Ա.ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Signed by: SARGSYAN ARPINE 6404940545

Հավելված
ՀՀ ներքին գործերի նախարարի
հունվարի 21-ի 2025թ. թիվ 8-Լ հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Սույն իրավական ակտով սահմանվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ուսումնական հաստատության (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) պրոֆեսորադասախոսական անձնակազմին (այսուհետ՝ պրոֆեսորադասախոսական անձնակազմ) ներկայացվող պահանջները:

2. Սույն իրավական ակտի իմաստով պրոֆեսորադասախոսական անձնակազմում ընդգրկվում են ուսումնական հաստատությունում գիտամանկավարժական գործունեության իրականացնող հետևյալ պաշտոնները զբաղացնող անձինք՝ ուսումնական ասիստենտ, դասախոս, ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր, ամբիոնի պետ, ինչպես նաև ուսումնական հաստատությունում գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվելու համար համատեղության կարգով և պայմանագրային հիմունքներով ներգրավվող անձինք:

3. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոններում կարող է նշանակվել այն անձը, ով համապատասխանում է հետևյալ պահանջներից որևէ մեկին՝

1) Ուսումնական ասիստենտի պաշտոնի համար՝ ունի համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան:

2) Դասախոսի պաշտոնի համար՝

ա. ունի համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան.

բ. ունի համապատասխան մասնագիտության գծով մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորման աստիճան, գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 ուսումնական տարվա ստաժ և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հաստատված ցուցակում ընդգրկված գիտական պարբերականներում կամ դրանց համարժեք գիտական պարբերականներում հրատարակել է առնվազն 3 հոդված (առանց համահեղինակների) կամ հրատարակել է առնվազն 1 ուսումնական (գիտական), ուսումնագործնական կամ ուսումնամեթոդական հրատարակություն, որը տպագրության է երաշխավորվել բուհի կողմից (այսուհետ՝ հրատարակություն):

3) Ավագ դասախոսի պաշտոնի համար՝ ունի համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան, գիտամանկավարժական

աշխատանքի առնվազն 1 ուսումնական տարվա ստաժ և հրատարակել է 2 հրատարակություն:

4) Դոցենտի պաշտոնի համար՝ ունի համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան, գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 3 ուսումնական տարվա ստաժ և հրատարակել է 5 հրատարակություն:

5) Պրոֆեսորի պաշտոնի համար՝ ունի համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան, գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 5 ուսումնական տարվա ստաժ և հրատարակել է 10 հրատարակություն:

6) Ամբիոնի պետի պաշտոնի համար՝ ունի համապատասխան մասնագիտության գծով գիտական աստիճան, գիտամանկավարժական աշխատանքի առնվազն 7 ուսումնական տարվա ստաժ և հրատարակել է 10 հրատարակություն:

4. Սույն պահանջների 3-րդ կետով սահմանված՝ գիտական աստիճանի պահանջը պարտադիր չէ ուսումնական հաստատությունում բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով նախատեսված և ուսումնական հաստատության ղեկավարի հրամանով հաստատված հատուկ առարկաների դասավանդմանը ներգրավվող ուսումնական ասիստենտի, դասախոսի, ավագ դասախոսի և ամբիոնի պետի պաշտոններում նշանակվող ծառայողների համար:

5. Ուսումնական ասիստենտի և դասախոսի պաշտոնի համար սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները պարտադիր չեն, եթե անձը ներգրավվում է արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրով կամ ըստ անհրաժեշտության՝ լրացուցիչ կրթական ծրագրով դասավանդմանը: Այդ դեպքում ուսումնական ասիստենտի կամ դասախոսի պաշտոնների համար գործում են հետևյալ պահանջները՝ համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն կամ առնվազն միջին մասնագիտական կրթություն և համապատասխան բնագավառում վերջին տասը տարվա ընթացքում առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ:

6. Համատեղության կարգով կամ պայմանագրային հիմունքներով ուսումնական հաստատությունում գիտամանկավարժական գործունեությամբ զբաղվող անձանց վրա, ելնելով կրթական ծրագրերում սույն հավելվածի համաձայն վերջիններիս ներգրավման առանձնահատկություններից, տարածվում են համապատասխանաբար սույն հավելվածի 3-րդ կետի 2-րդ ենթակետով, 4-րդ և 5-րդ կետերով սահմանված պահանջները:

7. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համակարգի աշխատողները, բացառությամբ սույն հավելվածի 3-րդ և 4-րդ կետերով սահմանված պաշտոնները զբաղեցնող անձանց, կարող են մինչև 0,5 դրույքով նշանակվել ավագ դասախոսի, պրոֆեսորի կամ դոցենտի թափուր պաշտոնների՝ սույն հավելվածով սահմանված պահանջներին համապատասխան: